

չնացողք են եւ պիղծ. այլ երիցուն արժան է առնել պատարադ, զի սուրբ ամուսնաւ կայ» (Ձաք. 52): Հետը կը չըջեցնէր հինգ կալանաւորուած արեղաներ: Իր պատերազմը արեղաներու դէմ ծայրայեղութեան իսկ կը հասնէր. Քանաքեռ խօսած քարոզի մէջ կ'ըսէր. «ով ոք սպանանէ արեղայ մի, այլ ոչ դոյ հարցումն մեղաց նորա, այլ երթայ յարքայութիւնն Աստուծոյ» (Ձաք. 52):

Ունէր ճարտասան լեզու մը, ամբոխավար քարոզութեան համար. «Ոչ օրինօք աստուածաշունչ գրոց վկայութեամբ խօսէր, եւ ոչ կանոնօք սուրբ հարցն երից սուրբ ժողովոցն եւ ոչ սուրբ հարանց գրոցն, այլ մտացածին բանիւք յինքենէ՝ զոր ինչ բղխէր ի չար դիւաւան ոգւոցն՝ զայն խօսէր եւ մաքառէր ընդ ուխտականն» (Դարան. 457):

Օտար չէին իրեն նաեւ կախարդական փորձերը: Կը պատմէ Ձաքարիա թէ Մեխլու երբ նորք կը գտնուէր, «հայի ընդ բերդն Երեւանայ եւ տարածեալ զձեռս իւր որպէս թռչուն եւ չարժէր»:

Երբ կը հարցուի իրեն թէ ինչ նպատակ ունին այդ ձեւերը, կը պատասխանէ. «Կամիմ թռչել մինչեւ ի բերդն» (Ձաք. 49) - 50):

Գրիգոր Դարանազցի կը գրէ թէ Մեխլու իրեն թիկունք ունէր Զուղայեցիները, որոնք ամէն կերպ կը քաջալերէին զինքը, որ հաւածէ արեղաներն եւ եպիսկոպոսները, անոնց թուին մէջ, առանց տարակուսի, նաեւ կաթողիկոսները: Կը զօրացնէին, կ'ըսէ, Զու-